այսպիսի ՄԵՍՍՈՒՑ, սա դատաւորս դատելով բաւական լիցի, և մի մացի կրկին դատաստան, և դատաւորս այս պարտ է սոցայ դատել ըստ Օրինաց, և եթէ անօրէնութեամբ դանդատողն և կամ դատախազն ունի արձակութիւն դանդատել 'ի այս դատաւորէս 'ի տունն դատաստանի և գոցէ դատաստան 'ի վերայ անօրէնութեան դատաւորին ամսոյն։

ԳԼՈՒԽ ՅԹԶ.

Աղ եթէ քարէ եթէ փշուր 'ի հանքէ, և կամ 'ի ջրոյ շինեցեալ կացցէ և ՄԵՍՍՈՒՑԷ ժառանգութիւն տանն հայոց, և մի ոք ձեռնամուխ լինիցի 'ի այս գործ։

ԳԼՈՒԽ ՅԹԷ.

Ամենայն վաճառելեաց միջնորդ, այսինքն դալալ, պարտ է պահել համար իրաց վաճառեալ և գնեալ իրաց, և ՄԵՍՍՈՒՑԷ վկայ զոր ինչ գին հաստատեցեալ 'ի վերայ բանին վաճառեցեալ, և ստանալ վարձ վաճառողէն հարիւրն մի, և գնողէն հարիւրին մի առանց աւելի։

ԳԼՈՒԽ ՅԹԸ.

Ամենայն տուն եթէ յԱստուծոյ, եթէ իշխանի, և թէ ռամիկ ժողովրդի կառավարեսցի հրամանաւ Տեառն տան իւրոյ, ով ոք բնակիչք 'ի